ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/10>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

23-26 հուլիս 2019թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Հայրապետյան,
անդամներ՝ Սպարտակ Մուշկամբարյան/ԳԱ/,Արմինե Աբրահամյան /ԳԱ/, Արմինե Սահակյան/ԲԱ/, Անի Մելիքսեթյան/ԲԱ/,
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

Գնման ընթացակարգի գնահատման արդյունքները հաստատելու մասին

(Դ. Հայրապետյան)

1.Ընդունել ի գիտություն, որ

-ստացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվությունը, համաձայն որի՝

-<<Անապատ-2>> ՍՊԸ և <<Նաիրի Շին>> ՍՊԸ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, որը բավարարում է հրավերով սահմանված պահանջներին,

-<<Հարսնաձոր>> ՍՊԸ ունի 88865 դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ,

-<<Նաիրի Շին>> ՍՊԸ ֆինանսական միջոցների չափանիշը համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

-<<Անապատ-2>> ՍՊԸ և <<Հարսնաձոր>> ՍՊԸ կողմից ներկայացված չափաբաժինների համար որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ հրավերով նախատեսված չեն, <<Նաիրի Շին>> ՍՊԸ կողմից ներկայացվել են հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փատաթղթերը, որոնցում արձանագրվել են անհամապատասխանություններ՝

-հայտի 3, 3.1, 3.2 հավելվածները մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված չեն,

-բացակայում են նմանատիպ աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները, բացառությամբ՝ 426620 դրամ համաձայնագրի համար,

-բացակայում են Զիլ ՄՄԶ վարձակալված մեքենայի՝ վարձատուի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթը:

2.Հանձնաժողովի որոշմամբ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվել է նիստը և՝

-ծանուցվել <<Հարսնաձոր>> ՍՊԸ-ին՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնել արձանագրված գումարի վճարումն հիմնավորող փաստաթղթեր,

-ծանուցվել <<Նաիրի Շին>> ՍՊԸ-ին՝ շտկել արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունները:

3.Գնահատման արդյունքների հաստատման նիստը շարունակվել է 2019թ. հուլիսի 26-ին, ժամը 10:00-ին:

4.Ներկայացված փաստաթղթերի գնահատման ընթացքում հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ՝

-<<Հարսնաձոր>> ՍՊԸ կողմից ներկայացվել է գումարի վճարման անդորրագիրը և հարկային տեղեկանք՝ հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ, ինչը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և հայտը գնահատվել է բավարար,

-<<Նաիրի Շին>> ՍՊԸ կողմից շտկվել են անհամապատասխանությունները, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և հայտը գնահատվել է բավարար:

5.Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակիցներ, համապատասխանաբար՝

-<<Նաիրի շին>> ՍՊԸ 1,2,4 չափաբաժիններ,

-<<Հարսնաձոր>> ՍՊԸ 3,5 չափաբաժիններ,

-<<Անապատ-2>> ՍՊԸ 6,7,8,9 չափաբաժիններ:

-գնման գործընթացը շարունակել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ	.....	Դ. Հայրապետյան
անդամներ	.....	Ս. Մուշկամբարյան
	.....	Ա. Աբրահամյան
	.....	Ա. Մելիքսեթյան
	.....	Ա. Սահակյան
քարտուղար	.....	Լ. Ավետիսյան